Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԵՎ ՆԱԽԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԼԱՏՎԻԱՅԻ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Ք. ՌԻԳԱ ԵՎ Ք. ՎԻԼՆՅՈՒՍ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Ռուբեն Սիմոնյան,

Լիանա Գրիգորյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ և նախարարի օգնական:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Լատվիայի և Լիտվայի Հանրապետություններ, ք. Ռիգա և ք. Վիլնյուս, 2024թ. մայիսի 27-ից մայիսի 30-ը:

4. **Հրավիրող կողմը.**

«Տնտեսական համագործակցության և զարգացման» կազմակերպության (OECD) և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ):

5. **Գործուղման նպատակը.**

Ս. թ. մայիսի 28-ից 30-ը Տնտեսական համագործակցության և զարգացման» կազմակերպության (OECD) և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից «Աջակցություն ՓՄՁ-ների թվային փոխակերպմանն Արևելյան գործընկերության

երկրներում» ծրագրի շրջանակում կազմակերպվեց տարածաշրջանային ուսումնասիրության այց Լատվիայի և Լիտվայի Հանրապետություններ:

Գործուղման նպատակն էր ուսումնասիրել Լատվիայի և Լիտվայի Հանրապետություններում փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ) թվային տեխնոլոգիաների ներդրման և բիզնես գործընթացների թվայնացման արագացման և պարզեցման հարցում տրամադրվող աջակցությունը, ներդրումային ծրագրերը, իրականացվող քաղաքականությունը, գործող ռազմավարական մոտեցումները:

Այցը հնարավորություն ընձեռեց այցելել տեղական տեխնոլոգիական ընկերություններ, պատկերացում կազմել ՓՄՁ-ների թվայնացման էկոհամակարգի վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրել տվյալ երկրներում ՓՄՁ-ների թվային փոխակերպման գործիքակազմը: Այցը նպաստեց քաղաքական փորձի փոխանակմանը քաղաքականության մշակողների միջև: Գործուղման արդյունքում նախատեսվում է մշակել արդյունավետ նախագծեր, որոնք ուղղված կլինեն ՓՄՁ-ների թվայնացման գործընթացի բարելավմանը և այդ գործընթացում նոր տեխնոլոգիաների ներդրմանը՝ հիմնված այդ երկրների փորձի վրա:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանի և նախարարի օգնական Լիանա Գրիգորյանի մասնակցությունը միջոցառմանը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու ՓՄՁ-ների թվայնացման մարտահրավերներին, ներկայացնելու տեղեկատվություն բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի Հանրապետությունում առկա նորարարություններին ու զարգացումներին, բանակցություններ վարելու միջոցառման մասնակից տարբեր պետությունների ներկայացուցիչների հետ՝ գործընկերային կապեր հաստատելու, համագործակցության առկա տարբերակների և դրանց ընդլայնման հնարավորությունների քննարկմանը:

6. Կայացած հանդիպումները և քննարկված թեմաները.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը և նախարարի օգնական Լիանա Գրիգորյանը հանդիպում են ունեցել պետական

կառավարման համակարգի ներկայացուցիչների, ինպես նաև մասնավոր տեխնոլոգիական ընկերությունների ղեկավարների հետ: Կազմակերպվել են այցեր ոլորտային ընկերություններ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

2024 թվականի մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը և նախարարի օգնական Լիանա Գրիգորյանը այցելել են Լատվիայի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն: Նրանք հանդիպել են Լատվիայի տնտեսական հարցերով պետքարտուղարի տեղակալ Ռայվիս Բրեմշմիտսի և Շրջակա միջավայրի պահպանության և տարածաշրջանային զարգացման նախարարության թվային փոխակերպման հարցերով պետքարտուղարի տեղակալ Գատիս Օզոլսի հետ:

Հանդիպման ընթացքում հայկական պատվիրակությանը ներկայացվել է Լատվիայի թվային փոխակերպման ազգային ռազմավարությունը, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ու ՓՄՁ-ների թվայնացման գործընթացների արդիականացմանն ուղղված աջակցության ծրագրերը: Անդրադարձ է կատարվել Եվրոպական միության կողմից անդամ պետություններին տրամադրվող աջակցության ծրագրերին, մասնավորապես քննարկվել է Եվրոպական թվային ինովացիոն կենտրոնների (EDIHs) կոնցեպտը, որը հանդիսանում է «Թվային Եվրոպա» ծրագրի բաղադրիչը:

Նույն օրը հանդիպում է տեղի ունեցել Լատվիայի Ներդրումների և զարգացման գործակալության ներկայացուցիչ Էլինա Ստրաուտմանի հետ, ով ներկայացրեց Լատվիայի ներդրումների և զարգացման գործակալության և Էկոնոմիկայի նախարարության համատեղ նախաձեռնությունները ուղղված բիզնեսի համար էլեկտրոնային ծառայությունների ընդլայնմանը:

Հանդիպումների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն շարունակելու համագործակցությունը և քննարկելու հնարավոր նախաձեռնությունները Հայաստանի թվայնացման քաղաքականության շրջանակներում:

Նույն օրը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը և նախարարի օգնական Լիանա Գրիգորյանը այցելել են «Liko R», «RedFrog» տեխնոլոգիական ընկերություններ և Ռիգայի տեխնիկական համալսարանի գիտության և նորարարության կենտրոն (RTU SIC), որը օգնություն է տրամադրում ընկերություններին թվային և տեխնոլոգիական գործընթացները բարելավելու գործում: Ընկերության ղեկավարները ներկայացրել են մանրամասներ թվայնացման գործընթացում իրենց փորձի, կառավարության կողմից տրամադրվող աջակցության, բիզնեսում թվային տեխնոլոգիաների օգտագործման օգուտների և մատահրավերների մասին: Այցը այս ընկերություններ հնարավորություն տվեց ուսումնասիրել արտադրական գործընթացում թվային տեխնոլոգիաների կիրառման ողջ գործընթացը՝ նախագծումից մինչև արտադրական հոսքերի կառավարում, որակի վերահսկում և էլեկտրոնային առևտրի կազմակերպում :

Մայիսի 29-ին Ռուբեն Սիմոնյանը և Լիանա Գրիգորյանը այցելել են «Latvian IT Cluster» և «Latvian Digital Accelerator» տեխնոլոգիական ընկերություններ: Կենտրոնները տրամադրում են ծառայությունների լայն շրջանակ, որոնք նպատակաուղղված են տեղական ընկերություններին աջակցել թվայնացման և նրանց մրցունակության բարձրացման գործում: ՓՄՁ-ներին թվային տեխնոլոգիաների ընդունման գործում օգնելու համար կենտրոնները տրամադրում են դրամաշնորհներ, ֆինանսական գործիքներ, ինչպես նաև կազմակերպվում են թվային գործիքները արդյունավետորեն օգտագործելու հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ:

Մայիսի 30-ին հայկական պատվիրակությունն այցելել է Լիտվա: Հանդիպում է տեղի ունեցել Լիտվայի էկոնոմիկայի և նորարարության նախարարի տեղակալ Իևա Վալեշկայտեի հետ: Հանդիպումը հնարավորություն է տվել ծանոթանալ Լիտվայում թվայնացման քաղաքականության ռազմավարական մոտեցումներին, մասնավորապես, քննարկվել է Լիտվայի թվային տասնամյակի ազգային պլանի հիմնական դրույթները, որոնք ուղղված են թվային հմտությունների, ՏՀՏ ենթակառուցվածքի և հանրային ծառայությունների և ձեռնարկությունների թվային փոխակերպման ամրապնդմանը:

ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը և նախարարի օգնական Լիանա Գրիգորյանը այցելել են «Litilit» ընկերություն, որը մասնագիտացված է հաջորդ սերնդի գերկարճ իմպուլսային լազերների արտադրության ոլորտում: Ներկայացվել է ընկերության արտադրանքը, միևնույն ժամանակ կազմակերպվել է շրջայց արտադրական տարածքներում և լաբորատորիաներում:

Այց է կազմակերպվել «Manufacturing Innovation Valley (MIV DIH)» ընկերություն, որը Լիտվայի թվային ինովացիոն կենտրոններից մեկն է: Կենտրոնը ծառայում է որպես արդյունաբերության վերափոխման և տեխնոլոգիական առաջընթացի կատալիզատոր Լիտվայում՝ առաջարկելով մի շարք ծառայություններ, որոնք հարմարեցված են Վիլնյուսի և Կաունասի արտադրական ձեռնարկությունների բազմազան կարիքներին:

«Manufacturing Innovation Valley»-ի տնօրեն Գինտարաս Վիլդան նախարարի տեղակալի հետ շրջայց է կատարել կենտրոնում՝ ներկայացնելով իրականացվող աշխատանքները, կենտրոնի հիմնական նպատակներն ու ծրագրերը, ինչպես նաև առաջարկվող ծառայությունները, որոնք օգնում են արտադրական ձեռնարկություններին բարելավել իրենց տեխնոլոգիական կարողությունները և արդիականացնել արտադրական գործընթացները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եզրակացություններ, ժամկետներ, պատասխաններ ակընկալող արդյունքներ.

«Manufacturing Innovation Valley»-ի տնօրեն Գինտարաս Վիլդան նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանին առաջարկեց 2024թ. սեպտեմբեր ամսին կազմակերպել եռակողմ հանդիպում՝ ներգրավվելով նաև Ֆինլանդիայի Հանրապետության պատվիրակությանը քննարկելու արտադրական ընկերությունների, ստարտափների, տեխնոլոգիաների մշակողների և հետազոտողների էկոհամակարգ ստեղծելու կոնցեպտը՝ ներգրավվելով նաև մասնավոր տեխնոլոգիական ընկերությունների ներկայացուցիչներին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկելու «Litilit» ընկերության և Հայաստանում լազերային տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների միջև համագործակցության հնարավորությունը, ներառյալ «ԼՏ-ՊԻՐԿԱԼ»

լազերային տեխնոլոգիաների կենտրոն (ՓԲԸ)-ի և Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հետ:

Նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը հանդիպումների ընթացքում ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականի աշնանը կազմակերպվող տեխնոլոգիական միջոցառումների ծրագիրը: Այցից հետո պաշտոնական հրավերներ են ուղարկվել ինչպես կառավարության ներկայացուցիչներին, այնպես էլ ոլորտային տեխնոլոգիական ընկերություններին՝ նրանց մասնակցությունը այդ միջոցառումներին դիտարկելու նպատակով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվ**

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

03.06.2024թ.